

այս միջոցին սուր էր եւ ինչ կը գործէր: Բայց
 գաւազանագրքերը ցոյց կու տան, որ Յովհ.
 Խուլ 1610—11 դարձեալ Կ.Պոլսոյ Պատրիար-
 քութիւնը ձեռք բերած է. սակայն 1611ին
 արդէն Գր. Վ. Կեսարացի խլած է ձեռքէն
 Պատրիարքութիւնը. վասն զի ստոյգ է որ Գր.
 Վ. Կեսարացի սոյն տարին վերստին գահընկէց
 եղաւ: Ասկէ անդին ունինք ժամանակակից եւ ա-
 կանատես պատմագրի մը՝ Գր. Վ. Գարանաղցւոյ
 կամ Կամախեցւոյ ժամանակագրութենէն քանի
 մը տեղեկութիւն:

Իսկ 1600—1612 Պոլսոյ պատրիար-
 քութեան շուրջը գործուածները տակաւին կա-
 րելի չէ եղած ստուգել եւ մանրամասնել.
 Թէպէտ Գարանաղցւոյ ժամանակագրութեան
 մէջ պիտի գտնուին շատ մանրամասնութիւններ.
 զոր օրինակ «Սիօն» ամսագրին մէջ (Եղմ. 1866.
 էջ 148, 167 եւն) սոյն ժամանակագրութենէն
 յառաջ կը բերուի, որ Գր. Վ. Կեսարացի
 1607ին Կեսարիա կը գտնուէր, որչափ կ'երեւայ՝
 ոչ իբրեւ Պատրիարք. վասն զի կ'ըսուի, թէ
 իշխանք Յակոբ Նաղաշ քահանան Կեսարիա
 ղրկեցին, որ Գր. Վ. Կեսարացին իր աթոռը
 բերէ: «Յետ քանի մի աւուրց Կեսարացին մե-
 ծաւ ամբօխիւ եմուտ ի Բիւզանդիա ահեղագոչ
 եւ խրոխտ կերպիւ որպէս զառիւծ, որ ամենայն
 շայոց ազգն սարսեցին ի նմանէ:»

Յառաջ քան Յովհ. Խուլի գործերը
 պատմելը, կ'ուզեմ Գր. Վ. Կեսարացւոյ եւ
 Գր. Վ. Գարանաղցւոյ կենաց ընթացքն հա-